

## Մ Է Կ Չ Ա Խ Պ Ա Ր Տ Ի

### Մատուռա Դոկայիի

Ահազադ Մահամէդը, Տունիսի զօրքերի սարդարը, իւր զինուորների վերաբերեալ անսովոր խիստ կարգապահութեամբ ամեն տեղ յայտնի էր:

Ոչ թէ թշնամուց, այլ ինձնից պէտք է վախենաք, ասում էր նա այն նորակոչներին, որոնք պէտք է իւր գնդի մէջ մտնէին: Նւ հենց այդ էր պատճառը, որ նորա զինուորները միշտ քաջութիւն էին: Նոքա, որ պատերազմի դաշտում վախ ասած բանը չգիտէին, իրանց հրամանատարի առաջ դողում էին:

Առաջին արշաւանքը, որ Մահամէդի զօրքերը կատարեցին և հիանալի ծառայութիւն մատուցին, Թիւրքիայումն էր՝ Ալբանիայի ապստամբ յայների դէմ:

Մէկ անգամ Մահամէդն իւր ութը զինուորներին իրանց ձիաներով Արտա աղբիւրի մօտ պահակ նշանակեց, որտեղից յոյները աւելի յաճախ էին յարձակուում: Զինուորներին խստիւ հրամայուած էր աչքերը չփակել, ոտքերը ասպանդակներից չը հանել և զնացող եկողին կանգնեցնել պահել:

Զինուորները վարուեցին, ինչպէս իրանց հրամայուած էր: Կէս գիշերին մի սայլ կամենում էր աննկատելի անցնել. բայց զինուորները ժամանակին նկատեցին և իսկոյն առաջը կտրեցին, յետ բերին: Եզները քշող սայլապանը՝ սայլը բաղդին թողնելով՝ փախաւ ազատուեցաւ:

Սայլի վերայ մի տակառ կար: Թէ ինչ կար տակառի մէջ, այդ իմանալու համար կարիք չկար ձիուց իջնել և կամ աչքերը փակել. բաւական էր միայն խցանը հանել, որպէս զի դիւրեկան ըմպելիքի հոտը վեր բարձրանար:

Պէտք է, որ շատ համով խմիչք լինէր, որովհետև թզից և չորացրած խաղողից էր պատրաստած: Գեաւուրները գիտեն թէ ինչն է լաւը:

Զինուորներին չէր արգելուած յափշտակած խմիչքներից օգտուել: Նոքա ամանով չէին խմում, այլ ծծում էին եղեգնի խողովակի միջով: Եւ ինչ կարող է մնասակար լինել, երբ երկաթ խողովակից է ծծուում: Այդ նոյն իսկ խմել չի կարելի անուանել:

Սակայն մարգարէն ոչ առանց հիմունքի հաստատում է, որ գինին պատրուակող խմիչքն է, որի մէջ սատանան իւր լեզուն կոխել է, որովհետեւ հենց այդ խմիչքն է մարդկանց վատ բաներ թելադրում:

Նախ և առաջ յորդորում էր զինուորներին, թէ ինչու նոքա ձիերի այն չոր թամբերի վերայ պէտք է նստած մնան, քանի որ մարգագետնի կանաչն այնքան փափուկ է: Եթէ մի կարճ ժամանակ նոքա կանաչի վերայ մեկնուեն, ոչ ոք չի կարող իմանալ: Զիւնքն էլ սալից կկապեն. ձիւնքն էլ հօ զաղաւնիքը չեն յայտնի:

Երբ նոքա կանաչի վերայ բազմեցին, դժոխային խմիչքն սկսեց նոցա բացատրել, որ ութ մարդու հսկելու կարիք չկայ քանի որ չորսն էլ բաւական են. իսկ միւս չորսը կարող են քնել: Կէ որ քունը Աստուծոց տրուած մի ազնիւ պարգև է:

Չորսին, որոնց վիճակուեց սկզբում հսկել, մինչև իրանց հերթին գալը, ժամանակը շատ երկար թուաց և այդ պատճառով համաձայնուեցան, որ երկուսն հանգստանան, իսկ միւս երկուսը հսկեն:

Երկու արթուն մնացողները, որոնք պէտք է հսկէին, կոչւում էին Մարուֆ և Զէֆէր:

— Գիտե՞ս ինչ անենք, Մարուֆ—ասաց Զէֆէրն իւր ընկերին—երկու մարդ կատարում են միևնոյն պաշտօնն այնպէս, ինչպէս և մէկը կարող է կատարել: Միանգամայն բաւական է որ մեզանից մէկն ու մէկը հսկէ: Այդպէս չէ:

Մարուֆը հաստատեց նորա ասածը:

—Արի մի օյն շախ խաղանք և ով խաղը տանուլ տայ, թող նա հսկէ, իսկ տանողը հանգստանայ:

Մարուֆն ընդունեց այդ առաջարկութիւնը:

Երկու բէգուկներն իրանց առաջ գետինը հարթեցին. աւագի վերայ նիզակների ծայրերով մի քառակուսի քաշեցին և բաժանեցին 64 մասի. Խաղալու քարերի փոխարէն անտառի պտուղներ վերցրին: Վայրի տանձը՝ որպէս թագաւոր, խնձորը՝ թագուհի, ամրոցին փոխարինեց կաղինը, ցատկողին՝ թրթնջուկի պտուղը (sauerrampferbeer), վազողներին՝ մասուրները և գիւղացիներին՝ փոքրիկ ելունդները:

Յետ նստեցին և պահականոցի կրակի լոյսի տակ դորանցով սկսեցին շախ խաղալ:

Սկզբում Զէֆէրն առաջ էր. բայց յետոյ թմրացնող խմիչքն ազդեց այնքան, որ ձևերն այլ ևս իրարից չէր կարողանում տարբերել: Իւր թագուհին կորցրեց և քիչ էր մնացել մի քանի շարքով խաղը տարուէր:

— Լսի՛ր, Զէֆէր, — սասաց Մարուֆը. երբ տեսաւ, որ խաղը համարեա արդէն տարած է — դու շատ անհաճոյ տագնապի մէջ ես:

— Ճիշտ ես ասում. քունս այնպէս է տանում, ինչպէս ծովը՝ քամու դադարած ժամանակ:

— Դու օյինդ տարւում ես:

— Տեսնում եմ:

— Ուրեմն յանուն Ալլահի զլուխդ վեր դիր. քո փոխարէն կհսկեմ:

Զէֆէրն ընկերի ձեռքը սեղմեց նորա այդ զոհաբերութեան համար և ուզում էր մի բան ասել, բայց արդէն տեղն ու տեղը քնեց:

Մարուֆն աչքերը չփակեց. իւր հրացանի վերայ յանուելով քուն մտած ընկերների մօտ հսկում էր:

Բայց դժոխային խմիչքը հետզհետէ սկսեց նորա ականջին սողորել:

— Ինչո՞ւ դու էլ ներքե չես նստում. դու մի յիմար մարդ ես, որ ոտքերդ յողնեցնում ես. այն ինչ նստած էլ շատ լաւ կարող ես տեսնել:

Բայց հէնց որ նստեց, սատանան նորից սկսեց — ինչո՞ւ ես աչքերդ յողնեցնում. եթէ մէկը փակես, միւսով էլ այնքան կտեսնես որքան և երկուսով:

Սև յետոյ հետզհետէ միւս աչքն էլ փակեց: Մարուֆն ինքն իրեն հանգստացնում էր նրանով, որ թէպէտ աչքերը փակ են, բայց ականջները շատ լաւ են լսում և եթէ մի փորձանք տեղի ունենայ՝ իսկոյն առաջը կառնի:

Սև ամենահաստատ մտադրութեամբ, որ չի քնիլ՝ նա էլ քնեց:

Դարան մտած յոյները յանկարծ դուրս եկան, սայլերից կապած ձիաները յետ արին, վերաները նստեցին և գուցէ և թուրքերին սպանէին, եթէ Մարուֆը վտանգի նախազգացման մէջ բարձր աղաղակած չլինէր:

Առաջինը, որ վեր թռաւ տեղից, Մարուֆն էր. նորանից յետոյ միւսները վեր թռան և ուղղակի վրայ ընկան գէնքերին. իսկոյն սթափուեցան. քունն ու խմելը անյայտացաւ: Նորա թշնամու յետից ընկան:

Միայն Մարուֆի ձին էր, որ չէր ուզում իւր վերայ նըստող յոյնին հպատակիլ. երկու ոտքերի վերայ ծառս էր լինում, որպէս դիւանար այս ու այն կողմն ընկնում, մինչև որ իւր վերայի նստողին վայր գցեց և մի աքացի տալով՝ յետ փախաւ: Միւս յոյները միայն բաւականացան յետ նայելով:

Ուրեմն ութ մարդու համար մի ձի էր միայն մնացել:

Այժմ ինչ կասի Մահամէղը դորա համար:

Բէղուիներն ափսոսում էին իրանց երկտասարդ կեանքը, որ Մահմէղը անկասկած չի խնայիլ. նա առաւել իրանց ձիաների համար, որ յոյները փախցրին, իսկ առանց ձիու մարդս ինչացո՞ւ է:

Տխուր և յուսահատ նոքա վերադարձան իրանց բանակը և Ահմանզադէն բոլորը ճշտօրէն պատմեցին. թէ ինչպէս նորա հրամանից անցել են, թէ ինչպէս գինի վայելելուց յետոյ քուն ները տարել է և թէ ինչպէս վերջին երկու հսկողները շախ են խաղացել և վերջապէս թէ ինչպէս իրանց ձիաները յոյները փախցրել են:

Ահմանզադէն երբ դատարկւիւ էր կտրում, բարկացած գէմք չէր ցոյց տալիս. նորա մշտական երեսին չէր կարելի ոչ մահու և ոչ կեանքի վճիռ կարգալ:

— Որովհետև ութ մարդու համար մի ձի է մնացել, ուրեմն ինքներդ ևս տեսնում էք, որ եօթ մարդն աւելորդ են. քանի որ ես ոչ Ղուրանում և ոչ էլ Ազարատում չեմ կարդացել, որ ութ մարդ մի ձիու վերայ նստեն: Նա որովհետև դուք յայտնի շախ խաղացողներ էք, ուրեմն թող խաղը որոշէ, թէ ով կլինի ձեզանից այն մէկը, որ այն ձիու վերայ կնստի. իսկ մնացեալներին մահուան հրեշտակին կյանքնենք:

Այն ժամանակ Ահմանզադը հրամայեց չորս հատ շախի տախտակ բերել, որը թուրքերն ամեն ճանապարհի վերայ իրանց հետ ունենում են. և երբ խաղն արդէն պատրաստ էր՝ ութ բէղուիները խաղի նստեցին:

12 պատրաստի գէնքեր էլ ետևները պատրաստ էր, որ երբ մէկը տարուի՝ իսկոյն հրացանի բռնեն:

Մէկը կամ միւսը տեղի էր տալիս իւր հետ լաւ խա-

դացողին: Յաղթուողներին իսկոյն դուրս տարան և միանուագ հրացանաձգութիւնը հաղորդեց, որ նոցա կեանքի վերջն է լինելու:

Առաջին կարգը վերջացաւ, չորսը սպանուեցին. իսկ միւս չորսը որպէս յաղթողներ մնացին:

Այժմ յաղթողներն իրար հետ են խաղում:

Նոր յոյս, նոր սարսափ և ահ ու դող: Լարուած ուշադրութիւն կեանքի և մահի համար կրկնակի կռուի մէջ: Մի սխալ խաղ, մի աննկատելի մնացած դէպք և խաղացողն արդէն պէտք է խաղալուց դադարի. դա կլինէր նորա մահուան վճիռը: Երկուսն էլ նորից տարուեցին. նոցա էլ դուրս տարան և հրացանի բռնեցին:

Միայն երկուսը մնացին:

Մարուֆն և Ջէֆէրը—Երկու հմուտ և լաւ խաղացողներ՝ ինչպէս և դրսում, պահապանների կրակի լոյսի տակ:

Նոցանից մէկն այժմ խաղում էր իւր վերջին խաղը:

Երկուսն էլ լարուած ուշադրութեամբ սկսել են խաղը. ձախտները ձեռքի փոխ մէջ պահելով, մտածելով և հտշուելով խաղում են առանց բարկանալու և շտապելու:

Երկար ժամանակ ոչ մէկն էր տարուում և ոչ միւսը: Մէկի յաղթութիւնը դիմացինի համար կորուստի էր հաւասար: Նայողներն ըստ մեծի մասին գլխի շարժումներով հետևում էին խաղացողներին, երբ նոցանից մէկն ու մէկն անսպասելի կերպով լաւ կամ վատ էր խաղում:

Հետզհետէ չախի տախտակէ երևաւ դատարկում էր. գլխաւոր ձևերն աջ և ձախ էին տարուում. դասաւորութիւնը սկսում էր պարզուել: Երկու խաղ էլ՝ և Ջէֆէրն իւր ամբողջ կորցրեց, Այժմ Մարուֆն աւելի առաջ է, նա մի ամբողջով ուժեղ է հակառակորդից. իսկ դա մեծ նշանակութիւն ունի. իւրաքանչիւրը հաւատացած է, որ խաղը Մարուֆն է տանելու:

Յանկարծ Մարուֆի ճակատից սկսեց քրտնքի կաթիլներ թափուել. մահուան երկիւղը պաշարեց նրան. նա ամբողջ մարմնով սկսեց դողալ:

Միայն այժմ գլխի ընկաւ, որ չնայելով իւր հակառակորդի ունեցած այն կորստին, որ ինքը նորան հասցրեց, այնուամենայնիւ իւր ձեռքի տակ մի խաղ ունի, որով նորան որպէս յաղթող հրատարակել կարող է, եթէ միայն նա այդ նկատէ:

Եթէ Զէֆէրն իւր թագուհին Մարուֆի ամրոցին զոհէ՝ այն ժամանակ նա իսկոյն ցատկողով խաղը կտանի։ Բայց արդեօք Զէֆէրն այդ խաղը կնկատէ՞։ Այս հարցը այժմ կեանքի ու մահուան նշանակութիւն ունի։

Զէֆէրն երկար նայում էր շաւի տախտակին. նորա աչքերի նայեացքը պարզ ցոյց էին տալիս, որ ազատութեան խաղը շատ լաւ տեսնում է։ Բայց և այնպէս ձեռքը խաղին չի մեկնում. այլ թւում է թէ ուրիշ բան է մտածում։

— Մարուֆ, — յանկարծ դիմեց Զէֆէրն իւր հակառակորդին — քանի՞ երեխայ ունիս։

— Զորս, պատասխանեց Մարուֆը դողացող շրթունքներով։

— Կինդ շուտով հինգերորդն էլ կբերէ, չէ՞։

— Այո՛.

— Դու մի բարի կին ունիս, չէ՞։

— Նա բարի է և հաւատարիմ, պատասխանեց Մարուֆը հոգոց քաշելով։

Զէֆէրի դէմքը վարանման, չվռթի արտայայտութիւն ստացաւ. նա սկսեց ինչ որ մրմնջալ. կարծես աղօթում էր։

Յետոյ կոնքով ջուր պահանջեց, որի մէջ իւր դէմքն, աչքերն և ձեռքերը լուաց. աջ և ձախ կռացաւ։ Այդպիսի ժամանակ երկու պահապան հրեշտակներն անտեսանելի կանգնած են աղօթողի ետև։

— Դու անցեալ գիշեր գիշար քո յաղթութիւնն ինձ, որ ես քնեմ, այդպէս չէ՞. նորից սկսեց Զէֆէրը։

Մարուֆը միայն գլխով արաւ։

— Դու միշտ ինձ համար լաւ ընկեր ես եղել, Մարուֆ։ Սա ոչինչ չպատասխանեց։

Զէֆէրը մեկնեց ձեռքը խաղի ձևին, բայց ոչ թէ թագուհուն, այլ ցատկողին։

— (Շախ մատ <sup>1)</sup>) Եւուեց չորս կողմից. իսկոյն կանգնածներից իւրաքանչիւրը շտապեց հաղորդել, Մարուֆը վերջապէս յաղթեց. Զէֆէրը կորած էր։

Զէֆէրը հանգիստ կանգնեց, նորից մի անգամ սեղմեց իւր անշարժ նստած ընկերի ձեռքը և նշան արաւ իւր յետևը պատրաստ կանգնած պահապանին, որ ինքը պատրաստ է։

Երկու ըոպէից յետոյ հրացանի զնդակը հաղորդեց, որ

<sup>1)</sup> Տարած։

խաղը վերջացել է:

Ձէֆէրը նոյնպէս հրացանի բռնուեց:

Բայց Մարուֆը դեռ վարջացած խաղի տեղում նըստած էր:

Դաժուհն հայեացքով նայում էր իւր առաջ և դողդոջուն ձեռքերով խաղի ձևերը նորից դարսում. բայց այնպէս էր դարսում, կարծես խաղի մասին գաղափար չունի. աստիճանաւորները գիւղացիների հետ և սպիտակները սևերի հետ էր խառնում:

—Վեր կաց, կանչեց նորան Ահմադադէն—ձի նստի՛ր գու կենդանի մնացիր:

Բայց Մարուֆը չէր վերկենում և շարունակ նայում էր իւր առջև:

Միաժամանակ նա սկսում էր անմիտ խաղեր խաղալ. յետ ու առաջ էր տանում, դիտում և ծիծաղում. «որքան յիմար բան, մէկը մի տուրբան ունի, իսկ միւսը մի ձիու գլուխ»:

—Վեր կացրէ՛ք տեղից, հրամայեց Մահամէդը:

Նրկու զինուորներ բարձրացրին Մարուֆին, բայց նա երկչոտ ծիծաղով այս ու այն կողմն էր նայում: Նրկինք, երկիր, մարդիկ նորա համար անծանօթ բաներ էին դառել: Նա ցնորուած այս ու այն կողմն էր նայում և ինչ որ խօսում էր՝ մարդկային արտայայտութեան չէր համապատասխանում:

Նա վերջին խաղի ժամանակ խելագարուել էր:

ԳԵՐՄ. ԲԱՐԳՄ. ՆԵՐՍԷՍ ՅԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

Հալլէ: